

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

91
1096

Պրոլետարներ բոլոր յեղբուհեի միացե՛ք.

Կ. Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԿՏԱՎԱՏԸ

ՅԵՎ

ԿԱՆԵՓԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԺՈՂԿՈՄՍԻ

Յեբեփան - 1926

14891

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի

ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ


1. Ս. Շաղուհց. — Մեր անելիքները (սպասված) 20 կ.
2. Լ. Փիբուկյան յեվ Ս. Մելիքոնյան. — Ինչու ձեռնառու յե գործարանում յուղ և շվեյց. պանիր պատրաստելը 3 »
3. Լ. Փիբուկյան. — Սոսորույսերը և նրանց մշակության յեղանակները 10 »
4. Խ. Ավգալբեգյան. — Հ. Ս. Խ. Հ. Հողային Որենագիրքը, բացատրական հարց ու պատասխաններով. մասն առաջին, աշխատավորական հողագտագործություն (սպասված) 40 »
5. Պ. Լեֆիմյան. — Թթենու մշակությունը 10 »
6. Պ. Լեֆիմյան. — Շերամի վորդը, նրա կերակրելն ու խնամքը 10 »
7. Կ. Մելիք-Շահնազարյան. — Ծխախոտի մշակությունը 20 »
8. Ս. Քրիզոլիմ. — Տասը պատգամ տնտեսապահին 20 »
9. Խ. Յերիցյան. — Անհատական, թե կոոպ. կաթնատնտեսություն 10 »
10. Լ. Լաբուրյուն. — Բատրակ, կնքիր պայմանագիր (չափածո) 5 »
11. Մ. Թումանյան. — Շարքացանքը և նրա նշանակությունը. 15 »
12. (Իս. Տեր-Ներսիսյան. — Ինչպես մշակել խաղողի այգիները 28 նկարով) 35 »
13. «Յերեսներս դեպի գյուղ». — Անդրկովկասյան Յերկրային կոմիտեյի բանաձևը գյուղացիական հարցի մասին Ս. Շաղուհցի նախարանով 15 »
14. Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեյի Չորրորդ Պլենումի Բանաձեվերը 15 »
15. Ռ. Արմենյան. — Սոչոր յեղջյուրավոր անասունների ժանտախտը 15 »
16. Լ. Ազատյան. — Գյուղատնտեսական բանավորությունը և միջազգային կոմունիստական շարժումը 40 »
17. Ն. Խան-Ազյան. — Ուղեցույց արգյուն. վեա խոզարուծության 15 »
18. Քերզիմանզով. — Հավարուծությունը և նրա ոգուաները 20 »
19. Լ. Ավ. և ուշ. բան յերբեք (ազրո-պիյես) 20 »
20. Կոստանյան. — Կտավատը և կանեփը 20 »

Պրովեսարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

Հ Ր Ա Ց Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

№ 22 (25) «ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի № 22 (25)

Կ. Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ




Կ Տ Ա Վ Ա Տ Ը

Յ Ե Վ

Կ Ա Ն Ե Փ Ը

14891
16841
A II
23744



Հ Ր Ա Ց Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Հ Ո Ղ Ժ Ո Ղ Կ Ո Մ Ա Տ Ի

Յ Ե ր Ե Վ ա ճ — 1926

ԽՄԲ.ԳՐՈՒԹՅԱՄԲ
ՀՈՂԺՈՂԿՈՄԱՑԻ ԽՄԲ. ԿՈԼԼԵԳԻԱՑԻ

Գրառեպլար № 348բ.

Տիրաժ 2.000

Պետհրատի յերկրորդ տպարանն Յերևանում պատ. № 508

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայաստանում կտավատի յեվ կանեփի մշակությունը շատ քիչ է տարածված, մինչդեռ նրանք, վորպես ձեթ յեվ թել տվող բույսեր, գյուղացու տնտեսական դրուծյունը բարելավելու տեսակետից կարող են մեծ դեր խաղալ:

Մեր լեռնային գավառների մեծ մասի կլիմայական պայմանները նպաստավոր են կտավատի յեվ կանեփի մշակության համար, սակայն մեզնում այդ բույսերը մշակում են միայն սերմ ստանալու յեվ ձեթի նպատակով, իսկ ծղոտը համարյա չի գործադրվում՝ անոգուտ փչանում է:

Թե՛ կտավատը յեվ թե՛ կանեփը, մանավանդ վերամշակության համար (թել հանել, գործել յեվ այլն) մեծ թվով աշխատավոր ձեռք են պահանջում: Վերամշակության այդ աշխատանքները կատարվում են աշնանն ու ձմրանը, յերբ գյուղացին իր որը մթնացնում է ողաներում ննջելով կամ պարապ գրույցով:

Չնայած, վոր կտավատի ու կանեփի մշակությունը շատ աշխատավոր ձեռք է պահանջում, այնուամենայնիվ 5—6 անդամ ունեցող ընտանիքն առանց վարձու բանվորի կարող է մշակել 1—2 դեսյատին կտավատ կամ կանեփ:

Ամեն մի դեսյատինից ստացվում է 30—40 փ. սերմ յեվ 15—25 փ. թել, վորի արժեքն է ամենաքիչը 150—225 ռուբլի:

Այս գումարը մեր գյուղացու համար բավականին զգալի յեկամուտ է:

Կտավ գործելու դեպքում հնարավոր է դառնում զարգացնել նայել տնայնագործությունը (վուշի գործվածքներ), վորը հնարավորություն կտա ծածկելու մեր լեռնային գյուղացու մերկությունը:

Մեկ փութ վուշից (կտավատի սանրած թել) ստացվում է 30—35 գրվանքա մանվածք, վորը տալիս է 190 արշին ամուր քաթան:

Կանեփի մի դեսյատինից ստացվում է մոտ 30 փուլթ սերմ
յեվ 30—40 փուլթ թել, 120—200 ռուբլու արժեքով:

Պատերազմից առաջ Ռուսաստանի 25 նահանգի մոտ քսան
միլիոն գյուղական ազգաբնակչություն զբաղված էր վուշի գործ-
վածքներ արտադրելով: Այդ նահանգների գյուղերն էր մտնում
տարեկան հարյուր միլիոն ռուբլի վուշի գործվածքների համար:

Ռուսաստանի այս փորձն ու որինակը բավական է, վոր
6 ամիս ծմեռ ունեցող մեր լեռնային գավառների գյուղացիք
լուրջ կերպով ձեռնարկեն կտավատի յեվ կանեփի մշակու-
թյանն ու տնայնագործական համապատասխան ճյուղերի զար-
գացմանը:

Այդ գործում գյուղացուն մեծապես կոժանդակեն Հողժող-
կումատն ու տնայնագործական կոոպերացիան:

Վաստակավոր գյուղատնտես Կ. Մելիք-Շահնազարյանի
այս գրքույկը հրատարակվում է այդ գործին նպաստելու նպա-
տակով:

ԽՄԲ.

Կ Տ Ա Վ Ա Տ Ը

Կտավատի մշակությունը հայտնի յե շատ հին ժամանակներից. կտավատը մի ժամանակ մեծ դեր եր խաղում տնային տնտեսության մեջ. նրանից եյին պատրաստում հագուստեղեն և այլ գործվածքներ այն յերկրներում, վորտեղ բամբակ դեռ չկար կամ նրա մշակությամբ չեյին պարսպում:

Այժմ կտավատի մշակությամբ լայն չափով պարսպում են թե Յեվրոպայում և թե Խորհրդային Միության մի շարք վայրերում: Կտավատի մշակությամբ պարսպում են գլխավորապես յերկու նպատակով—թելից ոգտվելու և սերմից ձեթ պատրաստելու համար: Կտավատի ձեթը գործ են ածում կերակուրների մեջ և ներկեր (ոլիֆ, լակ և այլն) պատրաստելու համար:

Կտավատը միամյա բույս ե՝ 30—110 սանտիմետր (մոտ կես արշինից մինչև մեկ ու կես արշին) բարձրությամբ նեղ ու յերկար տերևներով և կապույտ կամ սպիտակ ծաղիկներով:

Կտավատի մի քանի տեսակները կան, բայց Խորհրդային Միության յերկրներում և մեզ մոտ մշակվում են գլխավորապես յերկու տեսակը՝ յերկայնաթելը (ДОЛГУНЕЦ) և ճղճղնոտը (КУДРЯШ): Առաջին տեսակը՝ յերկայնաթելը բարձր ե և քիչ ե ճյուղավորվում, այդ պատճառով ելցանվում ե գլխավորապես թել ստանալու համար, իսկ յերկրորդ տեսակի թուփը կարճ ե, ճյուղերը շատ և ցանվում ե սերմի համար:

ԻՆՉՊԻՍԻ ԷՈՂԵՐՈՒՄ ՊԵՏՔ Յերկայնաթել կտավատը սիրում ե խոնավ, քամիներից պաշտպանված հողեր, իսկ ճղճղնոտը՝ հաջողությամբ ե աճում համարյա ամեն տեղ,


յեթե միայն հողային և կլիմայական պայմանները նպաստավոր են (նկ 1):

Կտավատի համար ամենալավը համարվում է այն հողը, վորը պարարտ է, փխրուն և ազատ մոլախոտերից (ալաղից): Ծանր կավային և կրրային հողերում կտավատը լավ չի աճում: Ուժասպառ, սննդանյութերով աղքատ հողերում կտավատ կարելի չէ ցանել միայն այդ հողերը պարարտացնելուց հետո: Պարարտացնել կարելի չէ մոխրով, գոմաղբով և խառնաղբով: Գոմաղբով պետք է պարարտացնել աշնան հերկի ժամանակ, յեթե աղբը թարմ է, իսկ յեթե հին է՝ գարնանը. մոխիրը նույնպես պետք է գարնանը շաղ տալ ցանքատեղում:

Կտավատը համարվում է հողը հոգնեցնող, ուժասպառ անող բույս, այդ պատճառով էլ միևնույն հողում կտավատ ցանում են 5—6 տարին մեկ անգամ: Նա լավ աճում և լավ բերք է տալիս յերեքնուկից, կորնգանից և առվույտից հետո:

ԿՏԱՎԱՏԻ ՀԱՄԱՐ ՀՈՂՆ
ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՄՇԱԿԵԼ.

պետք է բազմախոփ գութանով հերկել մեկից մեկ ու կես



նկ. 1

Կտավատի թուփը:

Կտավատ ցանելու հողը կանոնավոր մշակելու համար, արտը հնձելուց հետո անմիջապես

վերջով խորությամբ: Բազմախոփ գութան չեղած դեպքում, նույն խորությամբ կարելի չե հերկել նաև մի խոփանի թեթև գութանով: Այդ տեսակ հերկված հողը կտավատի բերքատվության տեսակետից խոշոր նշանակութիւն ունի, վորովհետև նա հողը հարստացնում է սննդարար նյութերով:

Այդպես հերկված հողն աշնանը կրկին հերկում են, բայց այս անգամ արդեն 5—6 վերջով և ավելի խորությամբ ու թողնում են մինչև գարուն: Աշնանահերկն այն նշանակութիւնն ունի, վոր հողն անձրևներից, ձյունից շատ խոնավութիւն է ծծում, հողի կոշտերը քայքայվում, մանրանում են և հեշտացնում հողի մեջ յեղած սննդարար նյութերի, տարրալուծումը, վորը մեծ նշանակութիւն ունի կտավատի հաջող աճման համար:

Գարնան սկզբին, յերբ հնարավոր է դաշտային աշխատանքներն սկսել, աշնանը գութանով հերկված հողը նորից փոցխում են Ռանդալի ափսեյավոր փոցխով, մանրացնում կոշտերը, հարթում, պատրաստում ցանքի համար: Յեթե գյուղում կամ մոտիկ վարձակայանում Ռանդալի փոցխ չլինի, ապա հողը կարելի չե փոցխել յերկաթե զիգ-զագ ծանր փոցխով, — խաչաձև ու մի քանի յերես, մինչև վոր հողը մեկ վերջով խորությամբ փխրանա և հարթվի:

ՅԵՐԲ ՊԵՏԻ Ե ԱՆԵԼ ԿՏԱ-
ՎԱՏԻ ՅԱՆՔԸ.

Ձյունը հալվելուց հետո, յերբ ցանքատեղը հնարավոր է դառնում փոցխել, կտավատը ցանում են. գարնան ցըր-

տերը նրա վրա չեն ազդում: Մեր յերկրի կլիմայական պայմաններում կտավատը պետք է ցանել ապրիլ ամսին: Ուշ ցանած և արագ ծլած կտավատն ամառվա արևի ուժեղ և այրող ճառագայթներից դեղնում է և մեծ մասամբ փրչանում, իսկ գարնան սկզբին ցանածը՝ թեև ուշ է ծլում, սակայն մայիսի վերջերին և հունիսի սկզբներին բույսն

այնքան աճած է լինում, վոր շվաք է անում և հողի մեջ
յեղած խոնավության գոլորշիացման առաջն անում:

ԻՆՉ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ՅԵՎ Կտավատն ավելի լավ է ցա-
ԻՆՉ ԽՈՐՈՒԹՅԱՄԲ ՊԵՏՔ Ե նե սերմացան 'երենայով:
ՍԵՐՄԵԼ. Մեքենա չլինելու հալքում
ցանվում է ձեռքով. այս

դեպքում ցանում են յերկու յերես ու խաչաձև:

Սերմի քանակը կախված է նրանից, թե ինչի հա-
մար է ցանվում կտավատը— թել, թե՞ սերմ ստանալու
նպատակով:

Յեթե կտավատը ցանում են թել ստանալու համար,
ապա մեկ դեսյատինի վրա, նայելով տեղական պայման-
ներին, սովորաբար ցանում են 7—8 փութ և ել ավելի
սերմ, իսկ յեթե ցանում են սերմ ստանալու համար, բա-
վական է 4—5 փութը:

Կտավատից թել ստանալու համար (պարարտ և խոր
հերկված հողում) ցանքը պետք է խիտ անել, վոր ճրդ-
ճրդնոտ չլինի: Սերմը ծածկելու համար գործ են անում
թեթև տափաններ: Ցանում են 2—3 սանտիմետր (մոտ
կես վերշոկ) խորությամբ: Այդ խորությամբ ցանած սեր-
մը, բավարար խոնավություն և ջերմություն լինելու դեպ-
քում՝ ծլում է 4—6 որում, իսկ 6 որից հետո արտը բո-
լորովին ծածկվում է կանաչով: Չոր յեղանակին սերմը
8—10 որում հազիվ է ծլում, այն ել անհավասար:

ՍԵՐՄԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ.

Կտավատի համար ցանքի
խորությունն առանձնապես
նշանակություն ունի, այդ պատճառով ել սերմի ծլունա-
կության վրա առանձին ուշադրություն պետք է դարձ-
նել:

Արտաքին տեսքից սերմի հատկությունը վորոշելու
համար կան մի շարք նշաններ.—

1. Յեթե կտավատի սերմն արհեստական տաքու-
թյամբ չի չորացած, նա պետք է փայլուն լինի:

2. Սերմը պետք է մի գույնի լինի, իսկ յեթե կանաչ հատիկներ լինեն, կնշանակի սերմը լավ չի հասունացել:

3. Ջրի մեջ լավ սերմերն իջնում են տակը, իսկ վատերը բարձրանում են վերև:

4. Լավ սերմերը սաջի վրա տաքացնելիս վեր-վեր են թռչում, իսկ սեանալը և չճրթճրթալը նշան է, վոր սերմերը հին են և խակ:

Չնայած այս բոլորին, այնուամենայնիվ սերմի վերջնական ընտրության համար անհրաժեշտ է պարզել նրա ծլունակությունը, վորը կարող է վորոշել ամեն մեկը հեր տեյալ պարզ միջոցով. — թաց շորում կամ յերկու կտո թաց թաղիքի մեջտեղում շարում են 100 հատ սերմ և դնում տաք տեղ. լավ սերմերը ծլում են 4—7 որում. յեթե այդ ժամանակամիջոցում 100 հատ սերմից ծլել են 85—90 հատը, նշանակում է սերմը լավ է, իսկ յեթե այդ թվից պակաս է ծլել, ուրեմն՝ վատն է: Յեթե 100 սերմից ծլել են մոտ 60 հատ, այդ դեպքում ավելի լավ է այդ տեսակ սերմը չցանել: Ծլունակությունը պակաս լինելու դեպքում սերմը պետք է ավելի մեծ քանակությամբ ցանել:

Ցանելուց առաջ սերմը պետք է մաքրել. դրա համար ել կան կտավատի հատուկ սերմզտիչ մեքենաներ, վորոնք մեկ ժամում մաքրում են 5—6 փութ: Այդ մեքենաները թանգ չեն և մի գյուղին նույն իսկ մի մեքենան բավական է:

ՔԱՂՀԱՆԸ.

Կտավատը 2—3 վերշուկ բարձրանալուց հետո պետք է մոլախոտերից մաքրել: Այս աշխատանքը կատարելու համար պետք է ընտրել սովորած որ: Լավ կլինի, վոր քաղհանը կատարեն կանայք և յերեխաները, այն ել վտարորդիկ, վոր պեսզի վտանների տակ չջարդեն կտավատի ցողունները: Հինգ վերշուկ բարձրանալուց հետո, քաղհանելու կարիք չկա:

Յեթե հողը մշակված ե վերևում հիշած յեղանակով և կրտավատը ցանված ե գարնան սկզբին, ապա նա քաղհանելու կարիք չի ունենում, վորովհետև արագ աճում ե և ինքն ե խեղդում մոլախոտերին:

Կտավատն իր աճման ընթաց-
ԿՏԱՎԱՏԻ ՎՆԱՍՍԱՏՈՒՆԵՐԸ. քում յենթակա յե մի շարք
 վնասատուների, վորոնցից
 գլխավորներն են՝

ա. Գետնալուռն իր զարգացման առաջին շրջանում կտավատը յենթակա յե գետնալվի (կամ կտավատի լվի) հարձակմանը, այդ միջատը կրծում ե կտավատի տերևները. նրա դեմ կռվելու ամենալավ միջոցը վաղ ցանքանելն ե, վորովհետև կտավատը մոտ մի վերջուկ բարձրանալուց հետո, գետնալուռն արդեն անվնաս ե դառնում:

բ. Կտավատի վորդը. սա մոխրա-կանաչավուն վտանգավոր մի թրթուռ ե, վորը յերբեմն յերևում ե մեծ քանակությամբ և վոչնչացնում ե կտավատի տերևները: Այս վնասատվի դեմ կռվելու համար կտավատի ցանքատեղը պետք ե մոլախոտերից մաքուր պահել, ինչպես և ցանելիք սերմը լավ գտել մոլախոտերի սերմերից, վորովհետև այդ վորդը նախ զարգանում ե մոլախոտերի վրա և հետո անցնում ե կտավատին: Յեթե թրթուռը մեծ քանակությամբ ե յերևում, այդ դեպքում, արտի չորս կողմը՝ մոտ կես արշին խորությամբ և նույնքան լայնությամբ, առու յեն փորում, վորպեսզի թրթուռներն արտի վրա արշավելիս նրանց մեջ թափվեն: Առուների մեջ հավաքված վորդերին վոչնչացնում են յերկու յեղանակով՝ կամ ջարդում են, կամ հողով ծածկում:

գ. Ժանգը—կտավատի ամենավտանգավոր հիվանդությունը պիտի համարել: Սա յերևում ե պայծառ, դեղին բծերի ձևով, կտավատի ծաղկելու ժամանակ, տերևների և ապա ցողունների վերի մասերում, վորից թփի աճելությունը կանգ ե առնում: Այս հիվանդության դեմ կռվե-

լու միջոցները դեռ լավ ուսումնասիրված չեն: Նման դեպքում խորհուրդ են տալիս կտավատը շուտ քաղել, յեթե նա ցանված է թելի և վոչ սերմի համար:

ԿՏԱՎԱՏԻ ՔԱՂԸ.

Բարակ թել ստանալու համար կտավատը քաղում են, հենց վոր ցողունների ստորին մասն սկսում է դեղնել. իսկ սերմ ստանալու համար թողնում են՝ թուփը բոլորովին չորանա և սերմը հասնի: Յեթե ուզում են և՛ թել ստանալ և՛ հասած սերմ, ապա քաղում են այն ժամանակ, յերբ տերևների մեծ մասը թափվում է, գլխիկներն ու ցողունները դեղնում են, և սերմն սկսում է գորշ գույն ստանալ:

Սակայն կտավատի քաղը մոտավորապես կարելի չէ սահմանափակել յերեք շրջանով. —

1-ին շրջանն սկսվում է ծաղկելու ժամանակից և վերջանում է այն ժամանակ, յերբ ցողունի ստորին մասը դեղնում, թառամում է. այդ ժամանակ սերմի միջուկը կաթնավուն է լինում: Այդ շրջանում քաղած կտավատը տալիս է ամուր և նուրբ թել. իսկ յեթե ծաղիկը թափվելուց անմիջապես հետո քաղվի, թելն ավելի լավ հատկություն կունենա: Այս շրջանում քաղած կտավատի գլխիկները գործ են ածում վորպես անասունների կեր:

2-րդ շրջանն սկսվում է այն նշանով, ինչով վերջանում է առաջին շրջանը և վերջանում է, յերբ ցողունի և տերևների յերեք քառորդն սկսում է դեղնել, արտի ընդհանուր տեսքը դեղնավուն է, սերմերը կիսով չափ գունավոր և թեթև կերպով դեղնած: Այս շրջանում քաղած կտավատի թելը լինում է ավելի ամուր, քան առաջին շրջանինը, սակայն նրբությունն ու քնքշությունը պակասում է: Այս շրջանի սերմը պետք է գալիս թե՛ ձեթ հանելու և թե՛ ցանելու համար:

3-րդ շրջանն սկսվում է յերկրորդ շրջանի վերջից և տևում է մինչև այն ժամանակ, յերբ ցողունը և գլխիկ-

ները մուգ կարմիր գույն են ստանում, իսկ սերմերը բաց կարմիր, յերբ ցողունների գլխիկները թափ տալիս խշխշում են:

Այդ շրջանի սերմերն յուղով ավելի հարուստ են և սերմացվի համար լավ. միակ պակասությունն այն է, վոր ստացված թելը լինում է կոշտ, կոպիտ և դժվարությամբ է ճերմակ գույն ստանում: Այդ շրջանում սովորաբար քաղում են ճղճղնոտ կտավատը:

Ընդհանուր առմամբ կտավատի կատարյալ զարգանալու և հասունանալու համար պահանջվում է 10—12 շաբաթ:

Քաղի յեղանակը նույնպես կախված է այն բանից, թե ինչ նպատակով է ցանված կտավատը: Սերմի համար ցանված կտավատը, վորի ցողուններից թել չեն հանում, սովորաբար հնձում են գերան դիով, իսկ թել ստանալու համար ցանված կտավատը ձեռնաքաղ են անում, այսինքն հանում են արմատներով:

Մի քանի յերկրներում այժմ այդ աշխատանքը կատարում են հատուկ մեքենաների միջոցով, վորոնք որական քաղում են 2—4 դեսյատին տարածություն:

Կտավատը չպետք է քաղել տաք ու շոգ յեղանակին, վորովհետև այդ ժամանակ ցողունները կարող են կոտրատվել, ավելի լավ է քաղել ամպամած և խոնավ, բայց վոչ անձրևային յեղանակին: Պարզ որերին ավելի լավ է քաղել վաղ առավոտյան կամ իրիկնադեմին:

Քաղելիս պետք է աշխատել յերկար ու կարճ ցողուններն առանձին-առանձին հավաքել և փոքրիկ խուրձեր կապելով դիք դնել՝ չորացնելու համար: Սուրձեր կապելուց առաջ ցողունները պետք է մոլախոտերից մաքրել և արմասների վրայի հողը թափ տալ: Շատ տեղերում կտավատը մի յերկու որ թողնում են, հնձած տեղում՝ առանց կապելու, վորպեսզի շուտ չորանա:


Չոր յեղանակին քաղած կտավատի շորանալու համար հարկավոր է մոտ յերկու շաբաթ, իսկ խոնավ յեղանակին քաղածի համար ավելի յերկար ժամանակ է պետք, նայած թե վոր չափով է խոնավացած կտավատը:

Վորպեսզի շորանալու համար փռած կտավատի գլխիկները գետնի վրա մնալով խոնավութունից չփչանան, առաջին շարքում գետնի վրա հաստ գերան են դնում և կտավատի ցողունների գլխիկները դեպի վեր՝ նրան դնում անում. իսկ հաջորդ շարքերի գլխիկները շարում են առաջին շարքերի ցողունների վրա:

Յեթե յեղանակը խոնավ ու սնձրեային է և հնարավորութուն չկա կտավատն արտում շորացնելու, բերում են գյուղը և սրահի տակ շորացնում:

ԿՏԱՎԱՏԻ ԿՍԼՍԵԼԸ. — Կտավատը շորացնելուց հետո գլխիկները ցողուններից բաժանում են՝ սերմը հանելու համար: Փոքր տնտեսութուններում դրա համար գործ են ածում սանդերքի նման շինած գործիք (նկ. 2) յեռանկյունի դանակաձև ճաղերով: Սանդերքանման այդ գործիքը շարժական է և ամրացված տախտակի վրա: Սանդերքի ճաղերը 4—5 վերջով յերկարութուն ունեն և շարված են իրարից մեկ ութերորդական վերջով հեռավորության վրա:


Այդ գործիքով կտավատի գլխիկները ցողուններից բաժանելու համար, մի բանավոր շորացած կտավատից փունջ-փունջ վերցնում է և արմատների կողմից բռնած՝ անց է կացնում սանդերքի ճաղերից և ձիգ տալով՝ պոկում գլխիկները. մի բանավոր ել հավաքում է պոկված գլխիկները և հեռացնում ցողունները:



Նկ. 2. Սանդերք

Քլիխիկները կտրելու և սերմը բաժանելու համար կան ավելի պարզ ձևեր. կարելի է կտրել դրա համար շինված հատուկ փոցխաձև բուլթ դանակներով

(նկ. 3), ցաքատով, կացնով, նրստարանի վրա դիք դրած տախտակի վրա ամրացրած սրղոցաձև գործիքներով (նկ. 4).



Նկար 3. փոցխաձև դանակներ

կայն այդ ձեվով կտրելն ունի իր պակասությունները. — այդ գործիքներով կտրելիս ցողունի մի մասը հաճախ կարճ և կտրվում, մյուսը՝ յերկայն:




Նկար 4. դիք դրած գործիք:

կալսելն արագացնելու և աշխատանքը թեթևացնելու համար կան կալսող մեքենաներ, վորոնցից ամենապարզը Եդդի կալսող մեքենան է (նկ. 5):

Խորհրդային Միության մեջ դրա նմանությամբ շինում են ավելի պարզ ու եժան մեքենա, վորը նույն գործն են կատարում, ինչ վոր Եդդի մեքենան և արժե


40—50 սուրբի: Այս մեքենայի արժանիքներից մեկն էլ այն է, վոր առանց ցողունները փշացնելու, հեշտությամբ ե պոկում կտավատի գլխիկներն ու կալսում: Եդդի մեքենայով 5—6 բանվոր 1—2 ձիով որական կարող են մոտ 3500 խուրձ կամ յերկու դեսյատինից ստացված կտավատի բերքը կալսել:



Նկար 5. Եդդի մեքենան:

Մի քանի տնտեսություններ միանալով, կարող են ձեռք բերել մի այդպիսի մեքենա, վորն առնվազն յերկու անգամ կեժանացնի կալսելու ծախքերը:

Շատ տեղերում կտավատի գլխիկները ցողուններից բաժանելու համար գործ են ածում նաև ձեռքի թակ (նկ. 6): Չորացած կրտավատի խուրձերը քանդում, փռում են յերկու հավասար շարքով աչնալես, վոր ցողունների գլխիկները կրպչեն միմիանց: Բանվորները կանգնելով ցո-



Նկար 6. Բելգիական թակ:

դունների արմատները վրա, սկսում են թակերով մի ծայրից ծեծելով առաջ գնալ: Առաջին հերթին ծեծում են գլխիկների այն մասերը, վոր կաշում են ցողուններին, ապա յերկու անգամ ել խփում արմատների կողմից, հետո փռած կտավատը շուռ են տալիս և կրկնում նույն գործողութունը: Այդպես ծեծելուց հետո հավաքում են ցողունները և թափ տալիս, վորպեսզի արանքներում փշրված գլխիկներ կամ սերմեր չմնան, ապա հավասարեցնում են, կապում և սլատրաստում թրջոց դնելու համար:

ԿՏԱՎԱՏԻ ՑՈՂՈՒՆՆԵՐԻ Կտավատի ցողունները բաղկացած են մի բանի շերտից.

— վերևի կեղևամաշկից, բարակ կեղևից, վորի տակ գտնվում է թելատու շերտը, իսկ նրա տակը՝ փայտյա մասը, իսկ վերջինիս մեջ՝ միջուկը, վորը հասած ցողունի մեջ քայքայվում է և դատարկ տարածութուն կազմում:

Ցողունի թել տվող մասը կեղևատակի շերտն է, վորը արմատներից ձգվում է մինչև գլուխը:

Ցողունի վերոհիշյալ մասերը կարծես իրար հետ սոսինձով կապած լինեն և վորպեսզի նրա սկտքական թելատու մասը բաժանվի մյուս մասերից, պետք է կտավատի ցողունները թրջոց դնել:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԹՐՉՈՅ ԴՆՈՒՄ Կտավատի թելատու շերտը

ԿՏԱՎԱՏԻ ՑՈՂՈՒՆՆԵՐԸ. մյուս մասերից բաժանելու համար յերկու միջոց կա — կամ ցողունները ջրի մեջ թրջոց են դնում, կամ ցողի (շաղի) միջոցով փափկացնում: Այս գործողութունների ժամանակ, ողի ջերմության, ջրի կամ անձրևի և կամ ցողի շնորհիվ մեծ քանակությամբ բակտերիաներ են զարգանում, վորոնք քայքայում են կտավատի թելատու մասերը միացնող նյութը և բաժանում փայտյա մասերից:

Կտավատի ցողունները փափկացնելու ժամանակ պետք է նկատի ունենալ, վոր ցողունների ներքևի մասերն

1421

ավելի շատ են փափկում, քան վերևի մասերը, հաստ ցողուններն ավելի շատ, քան բարակները: Դրա համար ել թրջոց դնելուց առաջ խուրձերը պետք է ջուկել և հաստ, բարակ, կարճ և յերկայն ցողուններն առանձին-առանձին դնել:

Ջրի մեջ թրջոց դնելու, ինչպես և ցողով փափկացնելու ժամանակ յեղանակը պետք է տաք լինի, հակառակ դեպքում ցողունների փափկանալը կդանդաղի:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՅՈՂՈՎ ՓԱՓ. Ցողով փափկացնելու համար ԿԱՅՆՈՒՄ ԿՏԱՎԱՏԸ կտավատը փռում են չոր, հարթ, քամիներից պաշտպանված և կարճ խոտով ծածկված տեղում: Յեթե այդպիսի տեղ չի գտնվում, ուղղակի փռում են արտում՝ խոզանի վրա, բայց վոչ վարսակ ցանած արտում: Պետք է այնպես փռել, վոր կտավատը հողին չդիպչի: Պետք է փռել բարակ շերտերով և վորքան շերտերը բարակ լինեն, այնքան ավելի արագ և համաչափ կփափկի կտավատը: Այս ձևով փռած կտավատի ցողունների փափկանալու արագությունը կախված է յեղանակից. անձրևային ինչպես և տաք ու պարզ որերին կտավատը փափկանում է 3—4 շաբաթվա ընթացքում, իսկ չոր և ցուրտ որերին տևում է 6 շաբաթ, յերբեմն ել՝ ավելի:

Այնտեղ, վորտեղ աշնան ցրտերը շուտ են սկսվում, կտավատի փափկացնելը հետաձգում են գարնան: Փափկացնելու ընթացքում կտավատի շաբաթերը պետք է հաճախ շուռ տալ, վորպեսզի ցողունները հավասար կերպով փափկանան:

Ցողով փափկացնելու գործողությունը վերջացած կարելի յե համարել այն ժամանակ, յերբ ցողունների դեղին գույնը մոխրագույն է դարձել և յերբ ցողունը կոտրելիս թելերը նրանցից հեշտությամբ են բաժանվում: Դրանից հետո կտավատի փափկացած ցողունները խուրձ-խուրձ կապում են, չորացնում և պահեստում պահում:

1684
HAREZ
H

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԿՆՆՏՐՈՆԱԿ

ՋՐՈՎ ՓԱԿԱՑՆԵԼԸ Ջրով փափկացնելու համար կտավատը ջրի մեջ թրջոց են դնում: Դրա համար ընտրում են կամ հոսող ջրեր՝ գետեր, առուներ (յեթե մոտակայքում կան), կամ կանգնած ջրեր: Թրջոց դնելու համար ընդունված ե հետևյալ լավ համարված յեղանակը. — փորում են քառանկյունի փոսեր այնպիսի տեղերում, վորտեղ ստորերկրյա ջրերը շատ խորը չեն կամ հնարավորություն կա մոտակա լճերից, առուներից կամ աղբյուրներից ջուր բերելու և փոսերը լցնելու:

Փոսերը, նայելով թե վորքան կտավատ կա, շինում են զանազան մեծության. սովորաբար նրանց խորությունը յերկու — յերկուս ու կես արշինից ավելի չի լինում:

Փոսերի պատերը և հատակը պետք ե տախտակել, վորպեսզի չքանդվեն և ջուրը չկեղտոտվի: Այդպիսի փոսերում ջրի ջերմությունը 10—15 աստիճան (Ցելսի) պետք ե լինի: Պարզ և մաքուր ջրում թրջոց դրած կտավատն սպիտակ ու մաքուր ե լինում:

Կտավատի խուրձերը փոսերում դարսում են ուղղահայաց կամ հորիզոնական — պակեցրած դրությամբ: Հաճախ դարսում են ծակոտիներով մեծ արկղներում և իջեցնում ջրով լի փոսերի մեջ: Այս ձևը հեշտացնում և արագացնում ե թե՛ դարսելու և թե՛ հանելու աշխատանքը:

Խուրձերը դարսելուց հետո ծածկում են ծղոտով, խսիրով և վրայից քար կամ մի ուրիշ ծանր բան դնում, վորպեսզի կտավատը ջրով ծածկվի:


Կտավատի փափկանալու արագությունը կախված ե նրանից, թե նա վոր շրջանումն ե քաղված և ջուրն ինչ աստիճան տաքություն ե ունեցել: Ընդհանրապես փոսի մեջ թրջոց դնելը տևում ե 5—14 որ: Հասած ե համարվում այն ցողունը, վորից թելը քաշելիս մինչև ծայրը չի կտրվում:

Թրջոց դնելուց հետո, փոսերից հանած կտավատը

նորից փռում՝ չորացնում են և փոխադրում պահեստները՝ մինչև քրքրելն ու թել հանելը:

Թրջոց դնելու համար պետք է յերկար տարիների փորձառություն և հմտություն ունենալ: Այդ պատճառով ել այն շրջաններում, վորտեղ նոր են սկսում կտավատի մշակությամբ պարապել, պետք է հաճախ դիմեն մասնագետների և փորձառուների խորհուրդներին:

ԿՏԱՎԱՏ ՔՐՔՐԵԼԸ. Փափկացնելուց հետո, կտավատի մշակության մյուս աշխատանքը քրքրելն է, այսինքն ցողունի փայտեղեն մասից թել հանելը: Իրա համար գործ են ածում մի շարք գործիքներ, վորոնցից շատերը պարզ են և շատերն ել բարդ: Ամենապարզ գործիքը քրքրելու տախտակն է դանակով: Իա ուղղահայաց կերպով նստարանի վրա ամրացրած հորիզոնական ձեղքով մի տախտակ է: Այդ ձեղքի միջով անց են կացվում կը-



Նկար 7. Քրքրելու գործիքը:

տավատի մի փունջ ցողուն և ձախ ձեղքով տախտակի հակառակ կողմից բռնում, իսկ մի ծայրը կախվում է: Վարպետն աջ ձեռքում բռնած քրքրող դանակով մեծ զգուշությամբ հարվածներ է տալիս և այնպես անում,

վոր թելերը չկտրտվեն, այլ քրքրվեն և ծղոտի կտորներին քաժանվեն (նկ. 7):

Այս աշխատանքը խիստ ծանր է և պահանջում է փորձառություն: Այս յեղանակով մի բանվորը կարող է որական ստանալ 20—25 փուլ թել: Թել քրքրելու համար կան հատուկ մեքենաներ:

Քրքրելու աշխատանքը մեծ մասամբ կատարում են ձմեռը՝ դաշտային աշխատանքներից ազատ ժամանակ:

Կտավատի վերամշակությունն սկսվում է, յերբ ըստացված թելը սանրում են, փայտային մասերից մաքրում և բաժանում յերկար ու կարճ տեսակների: Այս գործողությունը կատարվում է գնողների ձեռքով:

Կ Ա Ն Ե Փ Ր

Կանեփը պատկանում է խիստ բարձրացող թելատու բույսերի շարքին, ունի թաթաձև տերևներ և կանաչ ծաղիկներ: Նրա արական և իգական ծաղկամասերը գտնվում են տարբեր ցողունների վրա: Արական ծաղիկ ունեցող ցողուններն ավելի բարակ են և շուտ հասնող (նկ. 1):



Նկար 1. ա. արական թուփը, բ. արական ծաղիկը, գ. իգական թուփը, զ. իգական ծաղիկը, յե. սերմը:

Կանեփի մի քանի տեսակները կան: Ռուսաստանում և մեզ մոտ ամենից տարածված տեսակներն են.—1. Սովորական կոչված կանեփը, վորի բարձրութունը հասնում է յերկուսուկես արշինի. 2, Բոլոնի կամ Պիեմոնտի կանեփը. վերջինս հասնելու համար պահանջում է յերկար ժամանակ և այդ իսկ պատճառով նրա մշակութունը թե՛ Ռուսաստանում և թե՛ մեզանում դեռ կարոտ է փորձերի. 3. Չինական կանեփը, վորը տաք յերկրներում հասնում է 7—9 արշին բարձրության. 4. Հնդկական կանեփը (ցանում են Հնդկաստանում). նրա սերմից և տերևներից հաշիշ են պատրաստում:

Հաշիշը պատրաստում են ծխելու համար, վորն ուպիումի պես արբեցնում է: Բացի ծխելուց, հաշիշը բժշկության մեջ գործ են ածում իբրև թմրեցնող միջոց:

Յեվրոպայում կանեփը ցանում են բացառապես թելի համար, իսկ մեզ մոտ, բացի թելից՝ նաև սերմ ստանալու, վորը մոտ 30 տոկոս ձեթ է տալիս և գործադրվում է թե՛ կերակուրների, թե՛ ներկ ու ոլիֆ պատրաստելու համար:

Կանեփի ցողուններից ստացված թելն այն քնքույշ հատկութունը չունի, ինչ վոր կտավատի թելը—վուշը: Կանեփի թելից պատրաստում են պարուսին, զանազան կտորեղեն, ձկան թոռեր, պարաններ, քսակներ, իսկ նրա քուսպը գործ է ածվում իբրև տավարի կեր, ցողունի անպետք մասերը իբրև վառելիք, իսկ մոխիրը՝ վորպես լավ պարարտանյութ:

ԿԱՆԵՓԻ ՑԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՀՈՒ- Կանեփը կտավատից ավելի ՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԵՐԿԸ. պահանջկոտ է. նա սիրում է պարարտ հող, տաք կլիմա և սերմի հասնելու համար 18—22 շաբաթ:

Կանեփի ցանքատեղը պետք է հերկել աշնանը և գոմաղբով պարարտացնել սերմելուց 3—4 ամիս առաջ: Պա-

բարտացնելն անհրաժեշտ է, նկատի ունենալով, վոր կանեփը հանուամ են արմատներով, հետևապես հողի պարարտացման համար նա մնացորդ չի թողնում: Մի դեպքատին տեղի վրա փռում են 2—3000 փութ գոմաղբ:

Աշնանահերկից հետո պարնանը ցանքատեղը նորից յերեսանց հերկում են, փոցխում, կոշտերը մանրում ու հարթում:

ՍԵՐՄԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ, կանեփը ցանում են գար-
ՑԱՆԵԼՆ ՈՒ ԽՆԱՄՔԸ նանը՝ յեղանակները տաքա-
նալուց և ցրտահարության վտանգն անցնելուց հետո:

Սերմը պետք է առողջ լինի, սևագույն, վողորկ և փայլուն: Վատ սերմը լինում է մոխրագույն և ճերմակավուն: Կանեփի սերմացուն յերկու տարուց ավելի չի կարելի պահել, նա կորցնում է իր ծլունակությունը:

Նայած թե ինչ նպատակի համար է ցանվում կանեփը, ըստ այնմ էլ մի դեպքատին վերցնում են 6—9 փութ սերմ: Թեև ստանալու համար պետք է ցանել խիտ, ուրեմն՝ ավելի, իսկ սերմի համար նոսր (սեյրակ), ուրեմն՝ քիչ: Սերմը ցանում են կեսից մինչև յերեք քառորդ վերջոկ խորության վրա, փոցխի ոգնությամբ հողով լավ ծածկում են և 10—12 որ հետևում, վոր ցանած սերմերը թռչունները չտանեն, դրա համար մինչև ծլելը յերեխաներին հանձնարարում են հակելու: Այնուհետև յերբ ցողունը բարձրանում է և չորս տերև բռնում, մոլախոտերից մաքրում են: Շոգ յեղանակին և հողի չորության ժամանակ 8—10 որը մի անգամ են ջրում: Քաղելուց 15—20 որ առաջ այլևս չեն ջրում, վորպեսզի թելերը չթուլանան: Սերմելուց հետո ջրելու համար 4—6 արշին հեռավորության վրա փոքրիկ առուներ են փորում և նրանց միջոցով ջրում:

ԿԱՆԵՓԻ ՎՆԱՍՍԱՏՈՒՆԵՐԸ. Կանեփի գլխավոր վնասատուներից է գելուկը (դաղձը, ծարճինջին). սա վորպես մի պարազիտ բույս, հողից ծիլ տալով՝ փաթաթվում է կա-

նեփի ցողունին, մտնում նրա մարմնի մեջ և ծծելով նրա հյուսթը, չորացնում է նրան: Դաղձի առաջն առնելու համար պետք է հենց սկզբից, յերբ նա յերևում է, արմատախիլ անել և չթողնել, վոր բարձրանա և կանեփի ցողունին փաթաթվի ու սերմակալի:

Կանեփին զնասում են նաև խխուռնջները (անախաթուռնը), վորոնք յեթե շատ են լինում, թափվում են մատաղ կանեփի վրա և խժռում: Խխուռնջների առաջն առնելու համար ցանքի վրա պետք է չհանգած կիր փշել: Կիրը պետք է փշել վաղ առավոտյան, դեռ ցողը դրած ժամանակ:

ԿԱՆԵՓԻ ՔԱՂԸ ԿԱՄ ՀԱՆԵԼԸ. Կանեփի քաղը կամ հանելը յերկու անգամ է կատարվում. նախ հանում են արու կանեփի ցողունները, հենց վոր տեղի յե ունենում եգերին բեղմնավորելը, այսինքն՝ արու ցողունների ծաղկափոշին իգական ցողունների ծաղիկների վրա թափվելուց հետո: Այդ գործողութունը կատարվում է այն ժամանակ, յերբ կանեփի ցողունը և տերևներն սկսում են դեղնել և թառամել, վորը տեղի յե ունենում հուլիսի վերջերին կամ ոգոստոսի մինչև 15-ը, վորից 20—25 որ հետո սկսում են հանել իգական ցողունները: Այդ ժամանակ սերմն արդեն հասած է լինում: Սերմը լինում է կանեփի իգական ցողունների վրա: Վաղահաս և խակ կանեփը, եգ թե արու, քիչ թել է տալիս, բայց ավելի նուրբ և ամուր, իսկ ուշ քաղածները տալիս են կոշտ ու հաստ և հեշտ կտրտվող թել:

Ձեռքով արուների ցողուններն ավելի դժվար է հանել, քան եգերինը: Հանելիս պետք է շատ զգուշ լինել, վորպեսզի ցողունները չջարդվեն և սերմերը թափվեն: Ամեն մի հանող պետք է մի ոգնական ունենա, վորպեսզի նրա հանած ցողունները վերցնի և նշանակված տեղը տանի: Յեթե կանեփի ցողունները շատ յերկար են՝ 4—6 արշին բարձրութուն ունեն, այդ դեպքում վոչ թե ձեռ-

քով են հանում, այլ սուր մանգաղով հենց արմատից հնձում են:

Հանած կամ հնձած թփերն ըստ յերկարության ու կարճության դարսում են, ծղոտով կամ ուռենու բարակ կեղևով խրճիկներ կապում և գլխիկները փայտի կամ բերանը բաց տակառի խփելով, սերմը թափում, հետո գլուխ գլխի տված արևի առաջ կանգնեցնում, մինչև չորանան և վրայի տերևները թափվեն: Սերմն ել մաքրելով, բարակ շերտով փռում են, վոր չորանա, ապա մի ամիս հետո լցնում քսակներ և փոխադրում մկներից ազատ պահեստներ. ժամանակ առ ժամանակ սերմը խառնում են, վոր չտաքանա:

ԹՐՉՈՑ ԴՆԵԼԸ ՅԵՎ ԹԵԼ կանեփից թել են հանում այն **ՀԱՆԵԼԸ.** ժամանակ, յերբ թփերի վրայի տերևները թափվում են. նախ կացնով կտրում—հեռացնում են թփերի արմատները և հետո բաժանում բարակ, նուրբ, միջակ, և հաստ տեսակների: Թփերի միջից հանում են փնասված ու փշացածները և ջրկում են հավասար յերկարության և հաստության ցողունները: Այդ անհրաժեշտ ե, վորպեսզի թրջոց դնելիս ցողունները հավասար թրջվեն և մի մասը շուտ չթուլանա, իսկ մյուսը՝ դեռ ամուր մնա:

Թելը հանելու համար կանեփը կամ դնում են հոսող ջրի՝ գետի կամ առվի մեջ, կամ մեկուկեսից յերեք արշին խորության փոսեր են փորում, ջրով լցնում և այնտեղ թրջոց դնում: Հոսող ջրի մեջ փափկացած կանեփի թելը լինում ե ավելի մաքուր և լավ գույնի, քան փոսերի մեջ թրջոց դրածը: Թրջոց դնելիս ցողունները դասավորում են պառկեցրած ձևով և վրան ել բար դնում, վորպեսզի ջուրը նրանց ծածկի:

Ցողունները ջրում շատ կամ քիչ պահելը կախված ե ողի և ջրի տաքությունից: Սեպտեմբերի ընթացքում թրջոց դնելիս արու կանեփը ջրի մեջ պահում են 6—10

որ, իսկ եզր՝ 8—14 ուր. տաք յեղանակին և տաք ջրի մեջ կանեփն ավելի շուտ ե փափկում, քան սառը ջրում և ցուրտ յեղանակին:

ԿԱՆԵՓԻՑ ԹԵՆ ԶԱՆԵԼԸ. Յերբ կանեփի կեղևը քաշելիս հեշտությամբ ե պոկվում փայտից՝ ցողունները ջրից հանում են, խրձիկները բաց անում, լվանում, վոր նրանք վրայի կպած ցեխից, կեղտից մաքրվեն, հետո ուղղահայաց դիրքով պատերին դեմ են անում կամ մեկից—յերկու արշին բարձրության փայտեր տնկում, վրայից մի ձող ձգում և կանեփի ցողունների զխիկները դեպի վեր՝ ձողի յերկու կողմից շարում (նկ. 2):




Նկար 2. Կանեփի ցողունները շորացնելը:

Այս ձևով փռած կանեփը 3—6 ուրվա ընթացքում արդեն շորանում ե. այնուհետև վերցնում են, խրձիկներ կապում և կրծողներից ազատ մի սավերոտ տեղում պահում:

Թե՛լ հանելուց առաջ կանեփը դնում են տաք վառարանի (յեթե այդպիսին կա) մեջ կամ շատ տաք սենյակում, վորպեսզի շորանա, հետո փայտե ամուր թակով ծեծում կամ դրա համար շինված հատուկ մեքենայի տակ ձգում: Իրանից հետո թելերը մաքրում են մեծ գործարաններում՝ շոգու միջոցով, իսկ փոքր տնտեսություններում՝ առանձին սանդերքի կամ կտավատի թել հանելու գործիքով (այս գործիքների մասին տես գրքույկիս «Կրտավատը» բաժնում):

ԻՆՁ Ե ՍՏԱՅՎՈՒՄ ԿԱՆՔԻ ՑԱՆՔԻՑ. Նայելով մշակության յե-
 ղանակին և հողի կազմու-
 թյան՝ մի դեպքայանից կարելի յե ստանալ միջին հաշվով
 125—150 փութ կանեփի շոր թփեր, վորը կտա 30—35
 փութ թել: Պարարտացրած և լավ մշակված հողերից կա-
 րելի յե ստանալ յերկու անգամ ավելի (250—300 փ.).
 թփերի ցողուններից կտացվի 60—70 փութ պիտանի
 թել, իսկ 35—35 փութ սերմ:

Վեց փութ սերմից կարելի յե ստանալ 1 փութ 25
 ֆունտ ձեթ և յերկուսուկես փութ քուսպ:



ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՐՏԵՍՆԵՆ

1. Խ. Յերիցյան. — Կաթնատնտեսության գործնական ձեռնարկ, մասն առաջին, (64 նկարով)
2. Է. Փիբուսյան. — Դեմի հողերի մշակությունը
3. Ա. Բակունց. — Կարտոֆիլի մշակությունը
4. Պրոֆ. Ա.վ. Քալանթար. — Կաթնատու կովի կերակրումը
5. Պ. Քալանթարյան. — Գոմաղբի նշանակությունը պարարտացման գործում
6. Կ. Կ. Մելիք Շահնազարյան. — Գենադերչակի մշակությունը

ԴԻՄԵՂ՝ ՅԵՐԵՎԱՆ, Հողօդկումատ՝ Հրատարակչության, Պետհրատի կենտրոնական յեղ գալառական գրախանութ-ներին, Գավհողբաժիններին:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003097

084.

A $\frac{11}{23774}$

ԳԻՆՆ Ե 20 ԿՈՊԵԿ